



## *Մագիստրատուրա I-ին կուրսի ավարտական քննության հարցաշար 2017-2018 ուստարի*

1. Կենսադեղագործությունը որպես գիտական ուղղություն, ուսումնասիրության առարկան
2. Դեղերի կենսամատչելիությունը, բացարձակ, հարաբերական և ընդհանուր կենսամատչելիություն
3. Դեղերի կենսամատչելիության հիմնական ցուցանիշները, կենսահամարժեքություն
4. Դեղերի կենսամատչելիության վրա ազդող գործոնները: Ֆիզիոլոգիական գործոններ որոնք ազդում են դեղերի կենսամատչելիության վրա բերանով ընդունելու դեպքում
5. Դեղագործական գործոններ, որոնք ազդում դեղի կենսամատչելիության վրա: Դեղանյութի մանրեցման աստիճանի և բազմաձևության ազդեցությունը դեղի կենսամատչելիության վրա
6. Դեղանյութի լուծելիության նշանակությունը դեղի կենսամատչելիության համար: Դեղանյութի պարզ քիմիական փոխակերպման ազդեցությունը դեղի կենսամատչելիության վրա
7. Օժանդակ նյութերի և տեխնոլոգիական գործընթացի ազդեցությունը դեղի կենսամատչելիության վրա
8. Դեղաձևի և դեղի ներմուծման ուղու ազդեցությունը դեղի կենսամատչելիության վրա
9. Դեղագործական գործոնները և դեղի ֆարմակոկինետիկան
10. Դեղերի որակի գնահատման ֆարմակո-տեխնոլոգիական եղանակները
11. Դեղաձևերի դիզայնի սկզբունքները
12. Դեղի դիզայնը ըստ ներմուծման ուղիների: Դեղանյութի գործոնը դեղաձևի դիզայնում
13. Դեղաձևեր, որոնցում կարգավորվում է դեղանյութերի ձերքագատման արագությունը
14. Դեղաձևեր, որոնցից դեղանյութերի ձերքագատումը կարգավորում է դիֆուզիոն եղանակով
15. Դեղաձևեր, որոնցից դեղանյութերի ձերքագատումը կարգավորում է ուռչեցման, օսմոտիկ ճնշման եղանակներով. Հիդրոդոնդոզների կիրառումը դեղագործությունում
16. Դեղաձևեր, որոնցից դեղանյութերի ձերքագատումը կարգավորում է կադայարի քայքայման եղանակով: Միկրոչիպային համակարգեր
17. Դեղահատերի տեսակները: Ձևափոխված դեղահատեր: Դեղահատեր, որոնցից դեղանյութի անջատումը սկսվում է ընդունումից անմիջապես հետո
18. Դեղահատեր դեղանյութի երկարաձգված ձերքագատմամբ: Դեղը ստամոքսում մնալու ժամանակը երկարաձգելու մեթոդները

19. Թշնան և բերանում արագ լուծվող դեղահատեր:
20. Բազմամասնիկային համակարգեր, առավելությունները, ստացման եղանակները
21. Պուլսացիոն դեղաձևեր: Ժամանակային առումով վերահսկվող պուլսացիոն դեղաձևեր
22. Պուլսացիոն դեղաձևերի դերը և տեսակները: Բազմամասնիկային պուլսացիոն համակարգեր: Ներքին և արտաքին ազդակներով կարգավորվող պուլսացիոն համակարգեր
23. Միկրոպատիճներ: Միկրոպատիճավորում: Միկրոպատիճների թաղանթների տեսակները: Միկրոպատիճների կիրառումը
24. Միկրոպատիճավորման ֆիզիկական, ֆիզիկաքիմիական և քիմիական եղանակներ: Միկրոպատիճների կիրառումը
25. Տրանսդերմային թերապևտի համակարգեր, առավելությունները, կիրառման սահմանափակումները, դեղանյութերի մոլեկուլների ընտրությունը տրանսդերմային ներմուծման համար
26. Տրանսդերմային թերապևտիկ համակարգերի կառուցվածքը, կլինիկական կիրառումը, արդյունավետության բարձրացման եղանակները
27. Դեղանյութերի նպատակային առաքման համակարգեր, դասակարգումը, հիմնական դերը, կառուցվածքը
28. Դեղանյութերի նպատակային առաքման համակարգերի հիմնական կրիչների բնութագրերը: Նանոմասնիկները որպես կրիչներ: Մազնիսադեկավարվող համակարգեր
29. Լիպոսոմները որպես դեղանյութերի առաքման համակարգեր: կիրառումը, պատրաստումը
30. Դեղանյութերի ներառումը լիպոսոմներում: Դեղանյութերի նպատակային առաքումը լիպոսոմների միջոցով:
31. Դեղերի բազմաբաղադրելիության պատճառները: Դժվարություն ներկայացնող դեղագրություններ՝ բնորոշումը, դասակարգումը, բերել օրինակներ: Դժվարություն ներկայացնող դեղագրություններ, որոնք պատրաստվում են առանց բժշկի և բժիշկի հետ խորհրդակցելուց հետո:
32. Դեղատներ ներկայացվող դեղատոմսերի սխալ դուրս գրման դեպքեր: Դեղագետ-տեխնոլոգի իրավունքները և պարտականությունները: Անհամատեղելիությունների բնորոշումը, դասակարգումը: Բացահայտ և թվացյալ անհամատեղելիություններ: Բերել օրինակներ:
33. Ֆիզիկական և ֆիզիկաքիմիական անհամատեղելիությունների պատճառները: Լուծման պայմանների վատացումը որպես բացահայտ ֆիզիկական անհամատեղելիության տեսակներ:
34. Բաղադրամասերի անխառնելիությունը և պինդ նյութերի խառնուրդի խոնավացումը որպես անհամատեղելիության տեսակ:
35. Պինդ նյութերի խառնուրդի հալումը որպես բացահայտ և թվացյալ անհամատեղելիության տեսակ: Փոշիներում անհամատեղելիություններից ազատվելու համար կիրառվող տեխնոլոգիական մոտեցումները:
36. Կոլոիդ լուծույթների և բարձրամոլեկուլային միացությունների կոագուլացումը որպես անհամատեղելիության տեսակ: Էմուլսիաների շերտավորում: Դեղանյութերի ադսորբցիան որպես անհամատեղելիության տեսակ: Բերել օրինակներ:

37. Քիմիական անհամատեղելիությունների բնորոշումը, դասակարգումը: Օքսիդավերականգնման և տեղակալման ռեակցիաները որպես քիմիական անհամատեղելիության օրինակ:
38. Քիմիական անհամատեղելիությունների բնորոշումը, դասակարգումը: Փոխանակալին քայքայման, հիդրոլիզի և չեզոքացման ռեակցիաները որպես քիմիական անհամատեղելիության օրինակ:
39. Նստվածքագոյացումը որպես անհամատեղելիության տեսակ: Նստվածքների առաջացման պատճառները: Սրտային գլիկոզիդների նստեցումը: Բերել օրինակներ:
40. Ալկալոիդների և ազոտական հիմքերի նստեցումը: Բերել օրինակներ:
41. Դաբաղային նյութերի, բարբիտուրաթթվի ածանցյալների, սուլֆանիլամիդային պատրաստուկների նստեցումը որպես անհամատեղելիության օրինակներ: Բերել օրինակներ:
42. Ծանր մետաղների աղերի և հակաբիոտիկների նստեցումը որպես անհամատեղելիության օրինակներ: Բերել օրինակներ:
43. Դեղապատրաստուկների գույնի փոփոխությունը որպես անհամատեղելիության տեսակ: Բերել օրինակներ:
44. Գազերի անջատումը որպես անհամատեղելիության տեսակ: Բերել օրինակներ:
45. Առանց տեսանելի երևույթների ընթացող փոփոխությունները որպես անհամատեղելիության տեսակ: Ջրալուծ վիտամինների և հակաբիոտիկների ինակտիվացումը:
46. Բժշկական և դեղագործական կոսմետոլոգիայի հիմնական խնդիրները: Կոսմետոլոգիայի ժամանակակից դասակարգումը: Կոսմետոլոգիայի հոգեբանական ոլորտները:
47. Դեղանյութերի թափանցումը մաշկի միջոցով:
48. Կոսմետիկ պատրաստուկներում օգտագործվող կենդանական ճարպեր, մոմեր (կենդանական, բուսական, սինթետիկ):
49. Կոսմետիկ պատրաստուկներում օգտագործվող ածխաջրածնային հիմքեր և հելագոյացնող նյութեր:
50. Կոսմետիկ պատրաստուկների ստացման համար օգտագործվող էմուլենտներ, էմուլգատորներ, անուշահոտեր, ներկանյութեր և պիգմենտներ:
51. Հակաօքսիդանտների և կոնսերվանտների դերը կոսմետիկ պատրաստուկներում:
52. Կոսմետիկ պատրաստուկներ: Կոսմետիկ փոշիներ: Դասակարգումը: Նորմալ, չոր և ճարպոտ մաշկի համար նախատեսված կոսմետիկ փոշիներ:
53. Հեղուկ կոսմետիկ պատրաստուկներ: Կոսմետիկ լոսյոններ, նրանց դասակարգումը: Ճարպոտ, չոր և նորմալ մաշկի համար նախատեսված կոսմետիկ լոսյոններ:
54. Սափրման համար և սափրումից հետո օգտագործվող լոսյոններ: Արևապաշտպան և թթու լոսյոններ, նրանց մեջ ներառվող բաղադրամասերը: Անուշահոտերի և ներկանյութերի ավելացումը լոսյոններում: Լոսյոնների որակի հսկումը:
55. Փափուկ կոսմետիկ պատրաստուկներ: Կոսմետիկ նրբաքսուքներ, դասակարգումը:
56. Հոմոգեն և հետերոգեն փափուկ կոսմետիկ պատրաստուկներ: Մուսպենզիոն կոսմետիկ քսուքներ: Մուսպենզիոն կոսմետիկ քսուքներում պարունակվող լցանյութերի դասակարգումը և ազդեցությունը մաշկի վրա:
57. Էմուլսիոն նրբաքսուքներ, դասակարգումը: Մաքրող կոսմետիկ պատրաստուկներ, նրանց տեսակները: Օձառային նրբաքսուքներ դեմքի ճարպոտ և նորմալ մաշկի համար: Մաքրող բուսական յուղեր և նրբաքսուքներ:

58. Խոնավացնող և սնուցող կոսմետիկ նրբաքսուքներ: Ճարպային քսուքներ: Պաշտպանիչ և ցրտահարության դեմ օգտագործվող կոսմետիկ քսուքներ:
59. Կոսմետիկ քսուքների պահման պայմանները և որակի հսկումը:
60. Կոսմետիկ դիմակներ, նրանց դասակարգումը: Կոսմետիկ դիմակներում օգտագործվող հիմքեր և ազդող նյութեր: Մոմային կամ պարաֆինային դիմակներ:
61. Կոսմետիկ սկրաբներ, նրանց դասակարգումը: Սկրաբներում օգտագործվող կենսաբանական ակտիվ նյութեր (հղկանյութեր, կերատոլիտիկ նյութեր և այլն):
62. Բերանի խոռոչի և ատամների խնամքի կոսմետիկ պատրաստուկներ, նրանց նկատմամբ ներկայացված պահանջները: Ատամի փոշիներ:
63. Ատամի բուժահեղուկներ, նրանց պատրաստման համար օգտագործվող նյութերը և պատրաստուկի որակի ստուգումը:
64. Ատամի մածուկներ: Ատամի մածուկներում օգտագործվող հղկանյութեր և հելագոյացնող նյութեր: Ատամի մածուկների որակի ստուգումը:
65. Ատամի մածուկներում օգտագործվող խոնավեցնող, մակերևութային ակտիվ նյութեր: Կենսաբանական ակտիվ նյութերի դերը բուժ-կանխարգելիչ նպատակով օգտագործվող ատամի մածուկներում:
66. Եղունգների խնամքի համար կոսմետիկ պատրաստուկներ: Լաք եղունգների համար:
67. Եղունգների լաքի հեռացման հեղուկը և նրա որակի ստուգումը: Ձեռքերի խնամքի համար կոսմետիկ պատրաստուկներ:
68. Հոտազերծիչ կոսմետիկ պատրաստուկներ, նրանց դասակարգումը: Հոտազերծիչ կոսմետիկ պատրաստուկներում օգտագործվող ԿԱՆ-ի բնութագիրը:
69. Հակապերսպիրանտները որպես կոսմետիկ հոտազերծիչ պատրաստուկներ: Տալ ազդող նյութերի բնութագիրը՝ նշելով թերությունները: Հոտազերծիչ ցանափոշիներ:
70. Հեղուկ հոտազերծիչ պատրաստուկներ: Մատիտների տեսքով հոտազերծիչ պատրաստուկներ: Հոտազերծիչ նրբաքսուքներ: Հելանման հոտազերծիչ պատրաստուկներ: Աերոզոլային հոտազերծիչ պատրաստուկներ:
71. Օճառահեղուկներ, դասակարգումը: ՄԱՆ-ի հիմքով օճառահեղուկներ: ՄԱՆ-ի հիմքով օճառահեղուկներում օգտագործվող խտացուցիչներ, հակաստատիկներ, pH կարգավորիչներ և նրանց առանձնահատկությունները:
72. ՄԱՆ-ի հիմքով օճառահեղուկներում օգտագործվող կոնսերվանտներ, հակաօքսիդանտներ, հիդրորոպներ, ճարպոտացնող հավելումներ անուշահոտեր, ներկանյութեր և նրանց առանձնահատկությունները:
73. Օճառահեղուկների սպառողական հատկությունները որոշող բնութագրեր: Հակաթեփային օճառահեղուկներ: Օճառահեղուկների որակի հսկումը:
74. Կոսմետիկ օճառներ, դասակարգումը: Օճառների ֆիզիկաքիմիական հատկությունները: Ձեռքի կարծր օճառներին ներկայացված պահանջները:
75. Ձեռքի օճառների ստացման համար օգտագործվող նյութեր: Ձեռքի փոշենման և հեղուկ օճառներ: Ձեռքի օճառների որակի ստուգումը:
76. R&D հետազոտության հիմնական նպատակը և մեխանիզմները: Հիվանդությունների ուսումնասիրման մոդելները: Թիրախի վալիդացիա: Սկրինինգ: Բիոինֆորմատիկա: Պրոտեոմիկա:
77. Կենդանական բջիջների կուլտուրաներ: Բջջային կուլտուրաների մեթոդ: Բջջային կուլտուրաների որպես արտադրիչներ դասակարգումը: Կուլտիվացվող կենդանական բջիջների առանձնահատկությունները: Բջջային գծեր:

78. Կենդանական բջջային կուլտուրաների տեսակները և նրանց կիրառումը կենսատեխնոլոգիայում: Նրանց առավելությունը որպես արտադրիչներ: Բջջային կուլտուրաների բանկեր:
79. ԿԱՆ-ի (կենսաբանական ակտիվ նյութերի) կենսասինթեզը արտադրության պայմաններում: Կենսաբանական ակտիվ նյութերի անջատում, մաքրում, չորացում: Կենսապրեպատաների ստանդարտավորում:
80. Գենային ինժեներիա: Ռեկոմբինանտ ԴՆԹ-ի տեխնոլոգիա, ռեկոմբինանտ ԴՆԹ-ի էքսպրեսիայի կարգավորումը ռեցիպիենտ օրգանիզմում:
81. Կենսատեխնոլոգիական արտադրության կառուցվածքը: Կենսաօբյեկտ-արտադրիչներ (պրոդուցենտներ):
82. Բույսերի գենային ինժեներիա: Բուսական բջիջների կուլտիվացում:
83. Գենետիկական կոնստրուկցիայի էլեմենտները: Տրասֆորմացիա Ti-պլազմիդով:
84. Սպիտակուցների սինթեզը բույսերում: Ռեկոմբինանտ սպիտակուցների լոկալիզացիան բույսերում և հետտրանսլյացիոն մոդիֆիկացիաները: Բիոֆարմինգ:
85. Ցանքսանյութի աճեցում: Արտադրիչների բջջային կուլտուրայի աճի փուլերը, յուրաքանչյուր փուլի նշանակությունը ֆերմենտացիայի ընթացքում:
86. Մոնոկլոնալ հակամարմինների ստացում: Մոնոկլոնալ հակամարմինների հումանիզացիայի պրոցեսը: Նրանց կիրառումը դեղագործության և բժշկության մեջ:
87. Կենսատեխնոլոգիայում կիրառվող կենսաօբյեկտ – պրոդուցենտների տեսակները և առանձնահատկությունները
88. Բակտերիալ, սնկային և կենդանական բջիջների որպես արտադրիչների (պրոդուցենտներ) տարբերությունները և առանձնահատկությունները:
89. Բակտերիալ, բուսական և կենդանական բջիջների որպես արտադրիչների տարբերությունները և առանձնահատկությունները:
90. ԿԱՆ-ի (կենսաբանական ակտիվ նյութերի) կենսասինթեզը արտադրության պայմաններում: Բիոռեակտորներ: Կենսասինթեզի վրա ազդող գործոնները: